ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ՝ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՔԱՈՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

N2, 2022

Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: 1998 թ. առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է: Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0002-0609-2837

Հիմնաբառեր. *չափորոշիչ, տարածքային աճի բևեռ, մարզերի հավասարաչափ զարգացում, տնտեսական ներուժ, ռեսուրսային ապահովվածություն*

Հոդվածում անդրադարձ է կատարվել ներկայիս ռուս-ուկրաինական հակամարտության նախապատմությանը: Համոզմունք է հայտնվել, որ վերջինս տեղավորվում է «կառավարելի քաոսի» տեսության շրջանակներում: Հետաքրքրականն այն է, որ «կառավարելի քաոսի» տեսության սկզբունքները, որոնց կիրառման առումով մինչ այժմ գերիշխող երկիր է եղել ԱՄՆ-ը, այժմ փորձում է օգտագործել Ռուսաստանը՝ Ուկրաինայում:

Հեղինակի կարծիքով՝ համաշխարհային այսպիսի անկայունության պայմաններում ՀՀ-ն պետք է դիրքավորվի այնպես, որ, նախևառաջ, չվնասի սեփական ազգային շահերը: Իսկ դա ենթադրում է քաղաքական և տնտեսական «ճակատներում» վարել, այսպես կոչված, «սպասողական» քաղաքականություն, փուրք չտալ «հարևան» երկրների սպառնալիք պարունակող «հաշտության» պայմանագրերին, քանի որ անհրաժեշտ է հասկանալ գերտերությունների, հիմնականում՝ Արևմուտքի հեռահար նպատակները տարածաշրջանային անկայունության հանգուցալուծման հարցում: Այս տեսանկյունից, միշտ պետք է հիշել, որ յուրաքանչյուր երկիր գլոբալ քաոսի պայմաններում փորձում է ամրացնել իր դիրքերը՝ տպավորություն ստեղծելով, որ ինքը նույնպես «տեղավորվում» է այդ «խաղի կանոններում»:

Հետադարձ հայացք նետելով Ռուսաստանի և Ուկրաինայի միջև վերջին տասնամյակի հարաբերությունների ողջ պատմությանը՝ կարելի է նշել այդ երկրների միջև հակամարտության անխուսափելիության և օրինաչափության մասին: Ռուս-ուկրաինա-

կան ճգնաժամի ազդեցության ներքո տեղի ունեցան հիմնարար փոփոխություններ Արևմուտք - Ռուսաստան հարաբերություններում, ինչի հետևանքով ռուս-ուկրաինական պատերազմն այս հարաբերությունները փաստացի «սառը պատերազմի» մակարդակից տեղափոխվեց «տաք պատերազմի» լատենտ վիճակի: Ակնհայտ է, որ ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցության տակ «Մեծ Եվրոպայի» վերակառուցման նախագիծը վերջնականապես «կթաղվի», և Ռուսաստանի՝ եվրոպական միասնական համայնքին ինտեգրվելու մասին երազողները պետք է այդ մասին մոռանան առնվազն մի քանի տասնամյակ: Նույնիսկ եթե մոտակա ժամանակահատվածում ռուս-ուկրաինական հակամարտությունը կարգավորվի, նման սցենարը չի լուծի հիմնական աշխարհաքաղաքական հակասությունը Ռուսաստանի ու Արևմուտքի միջև, այլ, ընդհակառակը, հող կնախապատրաստի նոր՝ ավելի լայնածավալ հակամարտության բռնկման համար:

Նման կանխատեսման օգտին է խոսում 2008 թ.-ի ռուս-վրացական պատերազմի ընթացքը: Հակամարտությունը դադարեցվեց ռազմական գործողությունների սկզբնական շրջանում, ինչի արդյունքում Վրաստանը կարողացավ խուսափել լիակատար պարտությունից: Ռուսաստանին հաջողվեց հասնել այս պատերազմի միջանկյալ նպատակներին՝ փաստացի Վրաստանից անջատել Աբխազիան և Հարավային Օսիան՝ ուժեղացնելով իր ռազմական ներկայությունը Կովկասում և սկսելով աշխարհաքաղաքական հարձակողական գործողություններ Արևմուտքի դեմ, որը, պարզվեց, լիովին անպատրաստ էր Կրեմլի՝ նման գործողություններին:

Ռուս-վրացական պատերազմի ավարտից հետո, հակամարտության փորձը հաշվի առնելով, ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբը սկսել էր «հատուկ օպերացիա» ծրագրել Ուկրաինայի դեմ: Ներկայիս հակամարտության տարբերությունը ռուս-վրացականից այն է, որ տվյալ ժամանակաշրջանում Ռուսաստանը գերագնահատեց Արևմուտքի միջամտության հնարավորությունները, իսկ հիմա թերագնահատում է վերջինիս հզորությունը, մինչդեռ ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն գերագնահատում են իրենց հնարավորություններն ու թերագնահատում Ռուսաստանի կողմից սպառնալիքի աստիճանը: Այդպիսի իրավիճակը չափազանց վտանգավոր է, քանի որ Ռուսաստանը կորցնում է վախն Արևմուտքի նկատմամբ, ինչը նրան ավելի վստահ է դարձնում ուժ կիրառելու և ռազմական հաջողությունների հասնելու հարցում: Սա բարենպաստ հոգեբանական մթնոլորտ է ստեղծում՝ հօգուտ ռազմական էսկալացիայի: Ինչպես նշում է Կ. Վոլցը. «Պետությունը ուժ է կիրառում այն ժամանակ, եթե արդյունքում գնահատելով հաջողության հասնելու հեռանկարները՝ պարզում է, որ ցանկալի նպատակներն ավելի գրավիչ են, քան խաղաղությունը»[1]:

Նկատի ունենալով նմանատիպ սցենարները՝ Ռայմոնդ Արոնն իր «Ազգերի միջև խաղաղություն և պատերազմ» գրքում գրել է. «Կողմերի միջև փոխզիջման ձեռքբերումը ռազմական գործողությունների բռնկումից հետո դառնում է գրեթե անհնար, քանի որ թշնամի պետության իշխանության կամ վարչակարգի տապալումը ճակատագրականորեն դառնում է պատերազմի նպատակներից մեկը»[2]:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ պետք է հաշվի առնվի որոշակի ռազմավարության երաշխավորված արդյունավետության սկզբունքը: Ինչպես նշում է Վ. Լեֆևրը. «Ռազմավարության ընտրության հիմքը երաշխավորված արդյունքի սկզբունքն է՝ ինչ որոշում էլ որ կայացնի հակառակորդը, մեզ համար պետք է որոշակիորեն երաշխավորված լինի դրական արդյունքը»[3]: Այս հանգամանքը շատ կարևոր է՝ հաշվի առնելով Ռուսաստանի զգուշավոր պահվածքը, որը որոշում է գնալ արմատական քայլերի՝ միայն համոզված լինելով հաջողության հասնելու մեծ հա-

[1] Волтц К., Человек. Государство и Война: теоретический анализ, Цит. по: Теория международных отношений. Хрестоматия, Под. ред. П. А. Цыганкова. М., 2002.
[2] Арон Р., Мир и война между народами: Под общей ред. Даниленко В. И., М.: NOTA BENE, 2000.
[3] Лефевр В.А., Алгебра конфликта. М.: Знание, 1968.

վանականության մեջ:

Ելնելով վերը նշվածից՝ կարող ենք եզրակացնել, որ ներկա հակամարտությունը տեղավորվում է «կառավարելի քաոսի» տեսության շրջանակներում: Սակայն, հետաքրքրականն այն է, որ «կառավարելի քաոսի» տեսության սկզբունքները, որոնց կիրառման առումով մինչ այժմ գերիշխող երկիր է եղել ԱՄՆ-ը, այժմ փորձում է օգտագործել Ռուսաստանը՝ Ուկրաինայում:

Իր ծրագիրը կյանքի կոչելու համար Ռուսաստանը տարիներ շարունակ ձգտել է վարկաբեկել Ուկրաինայի պետական ինստիտուտները: Մասնավորապես՝ փորձ է կատարվել խորացնելու հակասությունները կենտրոնի և շրջանների միջև, ուռճացնելու էթնիկ ինքնավարությունն ու տարածաշրջանային անջատողականությունը: Այսպիսի քաղաքականության իրականացմանը նպաստել են նաև Ուկրաինայում գործող մի շարք քաղաքական ուժեր և ուկրաինական հեռուստաալիքներ: Ուկրաինային միջազգային աջակցությունից զրկելու համար նպատակ է հետապնդվել հակամարտություններ հրահրելու Ուկրաինայի և հարևան եվրոպական պետությունների միջև: Արևմտյան առաջնորդների հետ հանդիպումների ժամանակ վարկաբեկվել է Ուկրաինայի կառավարությունը՝ մեղադրվելով կոռուպցիայի և վարկային միջոցների կամ մարդասիրական օգնության չարաշահման մեջ: Միաժամանակ, շահարկվել է Ուկրաինայի կողմից ժամանակավորապես օկուպացված տարածքների գործոնը, և ստեղծվել է ռազմական սպառնալիքի համապատկեր՝ զորավարժություններ անցկացնելով ուկրաինական սահմանների մոտ, ինչպես նաև մշտապես գործադրելով էներգետիկ, տնտեսական և այլ ճնշումներ:

Այս բոլոր քայլերը վկայում են, որ տարիներ շարունակ Ուկրաինայի շուրջ նախապատրաստվել է «կառավարելի քաոս»: Ապագայում ևս Ռուսաստանը կփորձի վարել «կառավարելի քաոսի» և «վերահսկվող էսկալացիայի» ռազմավարություն, բայց կիրառելով չափավոր սցենարներ: Այսպիսով, ամենայն հավանականությամբ, ռուս-ուկրաինական պատերազմի ընթացքի սցենարը կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում կլինի ռազմական գործողությունների էսկալացիան՝ ինտենսիվության ցածր մակարդակով և նոր տարածքների հնարավոր գրավմամբ: Այսպիսի իրավիճակում վտանգ կա, որ ԱՄՆ-ը և Արևմուտքը կկորցնեն իրենց գերիշխող դիրքն աշխարհում: Նման կանխատեսում է արել Զ. Բժեզինսկին. «Ներքին դժվարությունները և համաշխարհային հարթակում երկարատև խնդիրները կհյուծեն Միացյալ Նահանգները, ամերիկյան հասարակությունը կարող է բարոյալքվել, ամերիկյան սոցիալական համակարգը կարող է դառնալ ոչ գրավիչ, կասկածներ կառաջանան ԱՄՆ-ի համաշխարհային գերակայության վերաբերյալ, և փաստացի վերջ կտրվի 21-րդ դարում ԱՄՆ-ի գերիշխանությանը»[4]: Բայց եթե նույնիսկ նման իրավիճակ ստեղծվի, նույն Ռուսաստանին կարող են չբավականացնել իր տրամադրության տակ եղած ուժերն ու ռեսուրսները՝ վերականգնելու համաշխարհային կարգն իր պայմաններով և իր տեսլականին համապատասխան: Հնարավոր է՝ Ռուսաստանն ինքը «խեղդվի» միջազգային այս քաոսում:

Ժամանակակից աշխարհի կառուցվածքն արագորեն փոխվում է, և քաղաքական իրականությունը որոշվում է համաշխարհային անկայունությամբ, որը հաստատվել է Վեստֆալյան համակարգի քայքայման հետևանքով: Վերջինիս փլուզման և միջազգային հարաբերությունների քաոսի խորապատկերում ձևավորվում է նոր աշխարհակարգ՝ հիմնված բազմաբևեռության սկզբունքների վրա:[5]

Մի կողմից, տեղի է ունենում Յալթա-Պոտսդամի համաշխարհային համակարգի վերջնական ոչնչացում, որն ձևավորվել է գերմանական նացիոնալ-սոցիալիզմի, իտալական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի նկատմամբ Երկրորդ համաշխարհային պատերազմում հակահիտլերյան կոալիցիայի պետությունների հաղթանակի արդյունքում, իսկ մյուս կողմից՝

[4] Бжезинский З. Стратегический взгляд: Америка и глобальный кризис / Пер. с англ. М. Десятовой. М., 2012.
[5] Будаев А.В. Роль «мягкой силы» во внешней политике. М, 2014.

ստեղծվում է նոր աշխարհակարգ՝ աճող գլոբալ անկայունության և միջազգային հարաբերությունների քաոսային համատեքստում, որտեղ ազգային պետությունների կայունության աստիճանը կախված է «վերահսկվող քաոսի» տեխնոլոգիաներին դիմագրավելուց կամ այդ տեխնոլոգիաները կառավարելի դարձնելուց՝ օգտագործելով դրանք սեփական երկրի հզորացման նպատակով:

Ինչ պետք է անենք մենք:

Կարծում ենք՝ համաշխարհային անկայունության պայմաններում ՀՀ-ն պետք է այնպես դիրքավորվի, որ, նախևառաջ, չվնասի սեփական ազգային շահերը: Դա ենթադրում է քաղաքական և տնտեսական «ճակատներում» վարել, այսպես կոչված, «սպասողական» քաղաքականություն, տուրք չտալ «հարևան» երկրների սպառնալիք պարունակող «հաշտության» պայմանագրերին, քանի որ անհրաժեշտ է հասկանալ գերտերությունների, հիմնականում՝ Արևմուտքի հեռահար նպատակները տարածաշրջանային անկայունության հանգուցալուծման հարցում: Այս տեսանկյունից, միշտ պետք է հիշել, որ յուրաքանչյուր երկիր համաշխարհային քաոսի պայմաններում փորձում է ամրացնել իր դիրքերը՝ տպավորություն ստեղծելով, որ ինքը նույնպես «տեղավորվում» է այդ «խաղի կանոններում»: Ինչպես նաև պետք է բացառել «համակարգում» (տվյալ դեպքում՝ երկրում) ապազգային տեղեկությունների տարածումը՝ տարածքային ամբողջականության զիջման կամ մեկ այլ երկրի մաս կազմելու տեսանկյունից: Անհրաժեշտ է առանց շտապողականության վերահիմաստավորել անկախության տարիներին հռչակված քաղաքական և տնտեսական առաջնահերթությունները, փորձել ստեղծել հակակշիռների համակարգ՝ ազգային անվտանգության ապահովման առումով: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ 44-օրյա Արցախյան պատերազմը նույնպես հրահրվեց «կառավարելի քաոս» ստեղծելու համար: Խնդիրն այն է, թե որ երկրներն էին հիմնական շահառուները և ինչ հեռահար նպատակներ էին նրանք հետապնդում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Волтц К., Человек. Государство и Война: теоретический анализ, Цит. по: Теория международных отношений. Хрестоматия, Под. ред. П. А. Цыганкова. М., 2002.
2. Арон Р. Мир и война между народами: Под общей ред. Даниленко В. И., М.: NOTA BENE, 2000
3. Лефевр В.А., Алгебра конфликта. М.: Знание, 1968
4. Бжезинский З. Стратегический взгляд: Америка и глобальный кризис / Пер. с англ. М. Десятовой. М. 2012
5. Будаев А.В. Роль «мягкой силы» во внешней политике. М, 2014
6. Цель и механизмы модели управляемого хаоса. https://nvo.ng.ru/concepts/2013-09-27/6_chaos.html/
7. Манн Ст. Теория хаоса и стратегическое мышление // Геополитика и Международные Отношения. Т. 1. М., 2012.

Ваге БУЛАНИКЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

УКРАИНСКИЙ КРИЗИС В УСЛОВИЯХ УПРАВЛЯЕМОГО ХАОСА

В статье была сделана ссылка на предысторию современного российско-украинского конфликта, в результате чего делается вывод, что текущий конфликт укладывается в рамки теории «управляемого хаоса». Однако интересно то, что принципы теории «управляемого хаоса», в плане применения которых до сих пор страной-гегемоном являлась США, то же самое теперь пытается применить Россия на Украине. В условиях такой глобальной нестабильности Республика Армения должна позиционироваться таким образом, чтобы, в первую очередь не пострадали национальные интересы, что предполагает проведение так называемой «выжидательной» политики на политико-экономических «фронтах». Не отдавать дань «мирным» договорам, угрожающим «соседними» странами, так как необходимо понимать далеко идущие цели сверхдержав, прежде всего Запада, в урегулировании региональной нестабильности. С этой точки зрения надо всегда помнить, что любая страна в условиях глобального хаоса пытается укрепить свои позиции, создавая впечатление, что она тоже «вписывается» в эти «правила игры».

Ключевые слова: *управляемый хаос, конфликт, глобальная нестабильность, национальные интересы, многогранный миропорядок*

Vahe BULANIKYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

UKRAINIAN CRISIS IN THE CONTEXT OF MANAGEABLE CHAOS

The paper touches upon the current Russian-Ukrainian conflict, as a result of which it is concluded that the current confrontation falls within the framework of manageable chaos theory. However, it is an interesting fact that the principles of the manageable chaos theory were initially widely applied by the USA, and now Russia is trying to apply it in Ukraine. In the face of such global instability, the Republic of Armenia must be positioned in such a way that, first of all, not to inflict damage to the national interests. This implies pursueing the so-called "waiting" policy on political and economic fronts, not considering reconciliation treaties that pose a threat to neighboring countries, as it is necessary to understand the far-reaching goals of the superpowers, mainly the West, in resolving the regional instability. From this point of view, it should always be borne in mind that in conditions of global chaos every country aims at strengthening its position by creating an impression that it also ”complies with the rules of the game”.

Keywords: *manageable chaos, conflict, global instability, national interest, multifaceted world order*